Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
մարտի 31-ի նիստի N 12
արձանագրային որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արագածոտնի մարզն ընդգրկում է Աշտարակի, Ապարանի, Թալինի և Արագածի տարածաշրջանները՝ 114 համայնքներով (3-ը՝ քաղաքային և 111-ը գյուղական): Մարզն ունի շուրջ 141 հազ. բնակչություն, որից՝ 33 հազ. քաղաքաբնակ (23 %), 108 հազ՝ գյուղաբնակ (77 %):

2010 թ. ընթացքում (ընթացիկ գներով) մարզում թողարկվել է 14466.6 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 2433.6 միլիոն դրամով: Աճ է գրանցվել հանքագործական արդյունաբերությունում (նախորդ տարվա համեմատությամբ շուրջ 153.6 %), մշակող արդյունաբերությունում (շուրջ 119.6 %), ջրամատակարարման ոլորտում (շուրջ 130 %), էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման ոլորտում (շուրջ 110.1 %): Խմիչքների արտադրությունը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 229.7 անգամ: Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է 115.1:

Բոլոր աղբյուրներով 2010 թ. ընթացքում օպերատիվ տվյալներով մարզում իրականացվել են մոտ 13,900.0 միլիոն դրամի (ընթացիկ գներով) կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է 10.000 միլիոն դրամով:

2010 թ-ին ՀՀ Արագածոտնի մարզում ՀՀ պետբյուջեի հաշվին ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել 674 մլն. 401.5 հազար ՀՀ դրամի հիմնանորոգման աշխատանքներ, որից ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով՝ թվով 12 օբյեկտների՝ 354 846.8 հազար և ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պատվերով՝ թվով 2 օբյեկտների՝ 51 655.6 հազար, ՀՀ մշակույթի նախարարության պատվերով՝ 63 899.1 հազար և ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվերով 1 օբյեկտի՝ 204 000.0 հազ ՀՀ դրամի հիմնանորոգման աշխատանքներ: 2010 թ. համար պլանավորված բոլոր աշխատանքներն ավարտվել են: Ինչպես պլանավորված էր, որոշ աշխատանքներ շարունակական են և ավարտվելու են 2011 թ.-ին:

2010 թ. մարզում արտադրվել է 61,4 միլիարդ դրամի գյուղատնտեսական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 9.6 %-ը, իսկ

նախորդ տարվա համեմատությամբ՝ 100.6 %-ը: Բուսաբուծության ոլորտում օպերատիվ տվյալներով արտադրվել է 30,600.0 միլիոն դրամի արտադրանք (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արտադրանքի 78.2 %-ը), որը կազմել է հանրապետական արտադրանքի 8.9 %-ը (2009 թ.-ին մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը (ընթացիկ գներով) կազմել է 54.6 միլիարդ դրամ՝ հանրապետության գյուղատնտեսական համախառն արտադրանքի 9.8 %-ը (բուսաբուծության մասով՝ 31.6 միլիարդ դրամ /9.1%/, անասնաբուծության՝ 23.1 միլիարդ դրամ /11%/):

1.1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների ֆինանսավորում

ՀՀ Արագածոտնի մարզպետարանին և մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի համար ՀՀ 2010 թ. պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորում է նախատեսվել ընդամենը **4,925,429.9** հազար դրամ:

Այդ միջոցները հատկացվել են .

1. <<ՀՀ 2010 թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով - **4,913,429.9** հազ. դրամ,
2. ՀՀ կառավարության որոշումներով՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին –**12 000.0** հազ. դրամ:

Տարվա ընթացքում, ՀՀ կառավարության որոշմամբ մարզպետարանին հատկացված գումարից պակասեցվել է **38 028,3** հազար դրամը:

Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի փաստացի ֆինանսավորումը կազմել է **4,845,631.0** հազար դրամ:

2009 թ-ին պետական բյուջեից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին ֆինանսավորման ամբողջ գումարը նախատեսված էր **5.762 .0** միլիոն դրամ, ֆինանսավորվել է **5.242.1** միլիոն դրամ:

	2009թ. ֆինանսավորում /հազ. դրամ/	2010թ. պլանավորված /հազ. դր./	2010թ. ֆինանսավորում /հազ. դր./
Մարզպետարանի պահպանում	235,873.5	231,228.6	225,437.0
Համայնքային բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում	50,000.0	0.0	0.0
Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանում և շահագործում	89,166.7	97,144.0	97,144.0
Մշակութային միջոցառումների իրականացում	3,278.2	3,278.2	3,278.2
Կրթություն	4,616,158.2	4507094.6	4,469 066.3
Երաժշտական դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցում	7,627.1	7,650.0	7,650.0
Կրթական օբյեկտների հիմնանորոգում	227,432.0.	51,655.6	25, 522.2
Նախագծային աշխատանքներ	896.0	0.0	0.0
Դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում	4,500.0	4,500.0	4,500.0
Ներառական կրթություն	0.0	9845.6	0.0

ºñ»Ë ³Ý»ñÇ ËÝ³ÙùÇ Ýå³ë ï	0.0	1033.3	1033,3
Ընդամենը պետբյուջեով	**5,234,931.7**	**4,913,429.9**	**4,833,631.0**
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	7,201.1	12.000	12,000.0
ԸՆԴԱՄԵՆԸ	**5,242,132.8**	**4,925,429.9**	**4,845,631.0**
Դոտացիա համայնքներին	**1,196,099.0**	**1,526,242.8**	**1,526,242.8**

2010 թ. տարեսկզբին, կատարված ճշտումներից հետո մարզի համայնքների աշխատավարձերի և սոց.վճարների նախորդ տարիների պարտքերը կազմել են 115.44 միլիոն դրամ: Տարվա ընթացքում մարվել է 73.64 միլիոն դրամի պարտք: Մնում է մարելու ևս 41.8 միլիոն դրամի պարտք:

ՀՀ Արագածոտնի մարզում 31.12.2010թ. դրությամբ առողջապահական կազմակերպություններում առկա են 22.3 մլն դրամի պարտքեր: Աշխատավարձի պարտքեր չկան:

Մարզի համայնքների բյուջեներով եկամտային մասը 2010 թ. նախատեսվել է 2,483.1 միլիոն դրամի չափով, որի դիմաց կատարողականը կազմում է 2,355,8 միլիոն դրամ կամ նախատեսվածի 94.9 % -ը:

Նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ աճը կազմել է 179.4 միլիոն դրամ:

1.2 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2010 թ-ին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսվում էր իրականացնել 674,4 միլիոն դրամի շինարարական աշխատանքներ: Եվս 544.7 միլիոն դրամի աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Սոցիալական Ներդրումներ հիմնադրամի կողմից:

Մարզում 2010 թ-ին տարբեր աղբյուրներով կատարվել է 32 միլիարդ 522.8 միլիոն դրամի շինարարություն:

Տարվա ընթացքում շահագործման է հանձնվել 26565 քառ. մ. բնակմակերես, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 4.9 անգամ:

,,Վորլդ Վիժըն Ինթերնեշնլ,, կազմակերպության Թալինի և Ապարանի գրասենյակների կողմից մարզում կատարվել են 94.7 միլիոն դրամի աշխատանքներ:

,,Վերջին օրերի սրբեր,, կազմակերպության կողմից իրականացվել է 10 ծրագիր՝ 48.0 մլն. դրամ արժողությամբ:

,,ՀՄՆՀ-ի միջոցներով 2010 թ. նորոգվել է 2 մշակույթի տուն (Գեղաձորի և Չքնաղի), 2 դպրոց (Գեղարոտի և Զովասարի) և 2 մանկապարտեզ (Ուջանի և Օշականի):

ՀՀ Նախագահի 2008թ. հուլիսի 30-ի թիվ ՆԿ-128-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցով իրականացվող և դեռևս չավարտված աշխատանքները ներառված են մարզի 2011-2013 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերում և ներկայացվել են համապատասխան ոլորտային գերատեսչություններին:

1.3. ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Արագածոտնի մարզի 3 քաղաքներում (Աշտարակ, Ապարան, Թալին) և 6 գյուղական համայնքներում առկա են 258 բազմաբնակարան շենքեր, 16,223 բնակարաններով, 410.7 հազ. ք.մ. ընդհանուր մակերեսով: Մարզի գյուղական համայնքների և քաղաքների բնակելի

ֆոնդի 98%-ը սեփականաշնորհված է: Բնակֆոնդի շահագործումը և սպասարկումը իրականացվում է սեփականատերերի կողմից: Բազմաբնակարան շենքերի կառավարումը համայնքներում իրականացնում են համայնքները: Ապարան քաղաքում գործում է 1 համատիրություն, որն սպասարկում է 15 բազմաբնակարան շենք:

Հաշվետու ժամանակաշրջանում հետևողական աշխատանք է տարվել ազգաբնակչությանը մաքուր խմելու ջրով ապահովելու համար: Մարզում չի արձանագրվել սուր աղիքային հիվանդությունների բռնկման դեպք: Մարզի 42 համայնքների /այդ թվում երեք քաղաքների ջրամատակարարումը իրականացնում է ,,Հայջրմուղկոյուղի,, ՓԲԸ /39/, և ,,Երևան ջուրը,, /3/, իսկ մնացած համայնքներինը /72/ իրականացնում են համայնքների լոկալ ջրաղբյուրներից:

2010 թ. մարզի երեք քաղաքներում և շուրջ 40 համայնքներում իրականացվել է խմելու ջրամատակարարման ծառայություններ 236.1 միլիոն դրամ գումարով ,,Հայջրմուղկոյուղի,, ՓԲԸ կողմից, որի դիմաց գանձվել է մոտ 189.5 միլիոն դրամի վարձավճար կամ հասույթի 80.2 %-ը: Նախորդ տարվա համեմատությամբ գանձումներն ավելացել են 4.9 %-ով կամ շուրջ 40.0 միլիոն դրամով:

Մարզի երեք քաղաքներում և գյուղական բնակավայրերում իրականացվում է աղբահանություն: Քաղաքներում այն իրականացնում են քաղաքապետարանին կից ստեղծված ձեռնարկությունները, իսկ գյուղերում՝ գյուղապետարանները:

2010թ. պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովմանն ուղղված ծրագրերի շրջանակներում աշխատանքների իրականացումը սառեցվել է՝ ֆինանսների սղության պատճառով, չնայած ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ քաղաքաշինության նախարարություն:

Պետական աջակցությամբ իրականացվող բազմաբնակարան բնակելի շենքերի նորոգման, ուժեղացման և պահպանման ծրագրերի շրջանակներում 2010թ. իրականացվել են Ծաղկահովիտ համայնքի թիվ 5 շենքի վերանորոգման աշխատանքները՝ 60 մլն դրամի չափով (պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն): Մարզպետարանի կողմից իրականացվել է մի շարք վթարային բնակելի շենքերի ուսումնասիրություն /Ապարան քաղաքի 4-րդ աստիճանի վթարայնություն ունեցող Բաղրամյան 43 շենք/: Մարզի բնակավայրերի տանիքների վերանորոգման կարիք ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերն ուսումնասիրվել են: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել է քաղաքաշինության նախարարություն:

20.12.2010 թ. դրությամբ մարզում գազաֆիկացված է 13722 բնակարան, որոնցից 4242-ը՝ բազմաբնակարան շենքերում, իսկ 9480-ը՝ առանձնատներում: Ըստ տարածաշրջանների պատկերն հետևյալն է.

Տարածաշրջանը	Բնակավայրերի թիվը	Ընդ. բաժանորդ	Այդ թվում	
			ԲԲԾ	Առանձնատուն
Աշտարակ	16	8266	2683	5583
Թալին	24	2794	694	2100
Ապարան	11	1864	682	1182
Արագած	7	798	183	615
Ընդամենը	**58**	**13722**	**4242**	**9480**

ՀՀ Արագածոտնի մարզում բջջային հեռախոսակապի ծառայություններ են մատուցում երեք օպերատորներ՝ «ԱրմենՏել», «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» և «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ-

ները: «ԱրմենՏել» ՓԲԸ Արագածոտնի մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ֆիքսված հեռախոսակապի պահանջարկը բավարարված է՝ կայանների ընդհանուր ունակությունը կազմում է 16100 հեռախոսահամար: CDMA ռադիոկապի բազային կայաններ տեղադրված են Աշտարակ, Թալին, Ապարան քաղաքներում և Ծաղկահովիտ նախկին շրջկենտրոնում: Բաժանորդների թիվը կազմում է 6547 բաժանորդ:

1.4. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ՀՀ Արագածոտնի մարզի ճանապարհների ցանցը կազմում է 787 կմ, որից 164 կմ միջպետական, 126 կմ-ը հանրապետական, 370.2 կմ-ը մարզային և 128 կմ-ը տեղական նշանակության:

2010 թ. ընթացքում մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության և շահագործման համար ՀՀ պետբյուջեով հատկացվել է 97.144 մլն.դրամ, որից 48.57 մլն դրամը նախատեսվել է ավտոճանապարհների ձմեռային պահպանության համար, իսկ մնացած 48.57 մլն. դրամով կազմակերպվել է մարզային նշանակության ավտոճանապարհների ա/բ փոսային նորոգման և ավազակոպճային ծածկի վերականգնման աշխատանքներ: Աշխատանքներն ավարտվել են:

2010 թ. մարտ-ապրիլ ամիսներին հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են մարզային նշանակության բոլոր ավտոճանապարհները և կամուրջները: Հրատապ վերանորոգման ենթակա ավտոճանապարհների և կամուրջների վերանորոգման հայտը ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ 2011 թ. ՀՀ պետ. բյուջեի նախագծում ընդգրկելու նպատակով: Մարզպետի բազմաթիվ միջնորդությունների արդյունքում 2007 թ գարնան հեղեղումներից տուժած Կարմրաշեն-Ոսկեթաս և Քուչակ-Եղիպատրուշ վթարային կամուրջները ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությանը հատկացված միջոցներով 2010 թ ընթացքում վերանորոգվել են, որի համար ծախսվել է 22 մլն.դրամ:

2010 թ Համայնքային բյուջեների հաշվին կատարվել է 75.0 մլն. դրամի համայնքային նշանակության ավտոճանապարհների վերանորոգում:

Ընդհանուր առմամբ, 2010 թ. մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների (կամուրջներ, հենապատեր և այլն) հիմնանորոգման, վերանորոգման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով ներդրումները կազմել են 2 միլիարդ 132 միլիոն 800 հազար դրամ:

2009 թ. մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, համայնքային ենթակայության ճանապարհների, արհեստական կառուցվածքների (կամուրջներ, հենապատեր և այլն) հիմնանորոգման, վերանորոգման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով ներդրվել է 2,378.0 միլիոն դրամ:

2010 թ. ՀՀ պետական բյուջեով Արագածոտնի մարզում իրականացվել է՝

1. Ակունք-Երևան-Գյումրի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհի 2.5 կմ հիմնանորոգման աշխատանքներ՝ 11.7 միլիոն դրամ արժեքով:

2.Երևան-Գյումրի-Վրաստան սահմանի հանրապետական նշանակության ավտոճանապարհի դեպի Արագածոտնի տանող 2.8 կմ մարզային ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ՝ 4.45 միլիոն դրամ արժեքով:

3. Քուչակ-Եղիպատրուշ մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհի կամրջի վերանորոգում՝ 9.0 միլիոն դրամ արժեքով:

4.Կարմրաշեն-Ոսկեթաս մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհի կամրջի վերանորոգում՝ 13.0 միլիոն դրամ արժեքով:

5. Ամբերդ պատմական հուշարձան տանող կամրջի 3.5 կմ նորոգում՝ 50.0 միլիոն դրամ արժեքով:

6. Երևան-Գյումրի Քասախ հանրապետական նշանակության կամրջի պահպանման ու շահագործման նպատակով՝ 104.65 միլիոն դրամ արժեքով:

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզում իրականացվել են Արայի-Վարդենուտ-Արագած մարզային նշանակության ավտոճանապարհի 3 կմ հիմնանորոգման աշխատանքներ՝ 360.0 միլիոն դրամ արժեքով և Թալին-Դաշտադեմ հատվածի 6.1 կմ նորոգման աշխատանքներ՝ 1,524.6 միլիոն դրամ արժեքով:

Ընթացքի մեջ է ,,Հարավկովկասյան երկաթուղի,, ՓԲԸ-ին կոնցեսիոն կառավարման հանձնված երկաթուղու համակարգի օբյեկտները որպես ՀՀ սեփականություն պետական գրանցում կատարելում գործընթացը՝ օբյեկտների զբաղեցրած հողամասերի սահմանները ճշտելու, զբաղեցրած հողատարածքների հողօգտագործման իրավունքները վերականգնելու և գլխավոր հատակագծերը տրամադրելու մասով:

Մարզի համեմատաբար խիտ բնակեցված քաղաքային համայնքներում բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 3-6 հեռուստածրագիր, իսկ որոշ գյուղական բնակավայրերում՝ 1-5 հեռուստածրագրեր:

1.5. ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզպետարանի կողմից ուշադրություն է դարձվում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման և վարձակալության տրամադրման գործընթացին: Հողերի օտարման մեխանիզմների կատարելագործման, հողերի օտարումներից առաջացած ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով, մարզպետարանի կողմից վերահսկողություն է իրականացվում աճուրդների անցկացման, հրապարակայնության ապահովման, մեկնարկային գների սահմանման և օտարումներից գոյացած միջոցները առաջնահերթության կարգով համայնքների քաղաքաշինական և հողաշինարարական ծրագրային փաստաթղթերի նախագծման և կազմման, ինչպես նաև համայնքների սոցիալական ծրագրերի իրականացման նպատակներով օգտագործելու համար:

2010 թ. պետական սեփականություն համարվող **42671.3** հա արոտավայրերից վարձակալության է տրամադրվել **3147.0** հա հող՝ **3106,0** հազար դրամ տարեկան վարձավճարով:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն համարվող հողերից աճուրդ-վաճառքով օտարվել է **121.64** հա հող, համայնքների բյուջե է մուտքագրվել **59,598.0** հազար դրամ: Համայնքային սեփականության հողամասերից վարձակալության է տրամադրվել **426.37** հա հողամասեր **2,140.3** հազ. դրամ վարձավճարով:

2009 թ. ընթացքում մարզում օտարվել է **160.1** հա հողատարածք, որի արդյունքում ձևավորվել է շուրջ **112.8** միլիոն դրամ հասույթ:

1.6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2009 թ-ին մարզում պտղի և հատապտղի տարածությունը կազմել է 4.957 հեկտար, որը նախորդ տարվա համեմատ ավել է եղել 591 հեկտարով, խաղողի այգետարածությունները նվազել են 387 հեկտարով, 2010 թ-ին կազմելով 1566 հեկտար: Մարզում ընդհանուր ցանքը 2010 թ. կազմել է 32.167 հեկտար՝ նախորդ տարվա 32.158 հեկտարի դիմաց (հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները ավելացել են 11 հեկտարով, կարտոֆիլի տարածությունները նվազել են 3 հեկտարով և կերային մշակաբույսերինը՝ 18 հեկտարով):

2010 թ. բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի գծով համախառն բերքի ցուցանիշների համեմատականը նախորդ տարվա ցուցանիշների նկատմամբ.

Ցուցանիշը	**2009թ. հազ. տոննա**	**2010.թ. հազ. տոննա**	**2010 թ-ը 2009 թ. նկատմամբ + -**
Արտադրվել է հացահատիկ և հատիկաընդեղեն	51.4	42.0	-9.4
Կարտոֆիլ	34.2	34.3	+0.1
Բանջարեղեն	25.3	28.6	+ 3.3
Բոստան	6.1	6.5	+0.4
Պտուղ, հատապտուղ	64.8	21.3	- 43.5
Խաղող	11.6	12.0	+0.4
Խոտ	145.0	146.9	+1.9

2010թ.-ին գյուղատնտեսական մշակաբույսերի տարածությունների աճին զուգընթաց, արձանագրվել է հացահատիկի և պտուղի համախառն բերքի նվազում: Սակայն արձանագրվել է կարտոֆիլի, բանջարեղենի, բոստանի և խաղողի բերքի և խոտի ավելացում:

2009 թ. աշնանը կատարվել է 8635 հեկտար աշնանացան, որից պահպանվել է 8325 հեկտարը: Ընթացիկ տարում կատարվել է 178 հեկտար բոստանային մշակաբույսերի, 803 հեկտար բանջարեղենի ցանքս և սածիլում, 130.4 հեկտար բազմամյա խոտերի մաքուր ցանքս: Անցած տարիների բազմամյա խոտերի ցանքային տարածությունը կազմել է 6088 հեկտար:

Ընթացիկ տարվա աշնանը կատարվել է 8455 հեկտար ցանքս:

Աշտարակի տարածաշրջանի 10 համայնքներում գործում է 15 հակակարկտային կայան: Յուրաքանչյուր համակարգ ապահովում է 100 հա տարածքի անվտանգությունը:

<u>Այնուամենայնիվ, մարզում դեռևս օրախնդիր է մնում հակակարկտային կայանների ցանցի ընդարձակման խնդիրը:</u>

Նախորդ տարվա ընթացքում տարերային աղետներից տուժել էր մարզի 60 համայնք, վնասվել էր 2481 հա. տարածք և ընդհանուր վնասը կազմել էր 1,016.0 միլիոն դրամ, իսկ 2010

թ. ցրտահարությունից տուժել է 10 համայնք՝ 300,5. հա ընդհանուր տարածքով: Վնասվել են հիմնականում ծիրանի այգիները. վնասը կազմել է 142 միլիոն դրամ:

Ուժեղ կարկտահարությունից տուժել է 18 համայնք՝ 2011 հա ընդհանուր տարածքով /պտուղ, խաղող/: 2010 թ. մարզի 25 համայքնում վնասվել է 2311,5 հա տարածք և վնասի չափը կամել է 2077,9 միլիոն դրամ:

2010 թ. ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին անվճար հատկացվել է 1941 կգ ցինկի ֆոսֆիդ, որը բաժանվել է 41 համայնքների՝ 15528 հա տարածքների վրա պայքարի աշխատանքների համար:

Հաշվետու տարում մարզի վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 1,111.9 տոննա խաղող: Խաղող վերամշակող ընկերությունների կողմից տնտեսվարող սուբյեկտներին է վճարվել 180.1 միլիոն դրամ:

Մարզի խաղողագործներից, մարզպետարանի կողմից նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, 2010 թ-ին հանրապետության տարբեր գործարանները մթերել են 2900 տոննա խաղող, որը անցած տարվա համեմատությամբ ավել է 700 տոննայով: Գումարն ամբողջությամբ վճարված է:

Ագարակ համայնքում 5300 քմ. տարածքի վրա հիմնվել է ջերմոցային տնտեսություն, որն զբաղվում է վարունգի և լոլիկի արտադրությամբ:

Անհատ և ֆերմերային տնտեսություններին բուսաբուծական և անասնապահական մթերքների արտադրության գործում մեծ աջակցություն է ցուցաբերում գյուղփոխօգնության բանկը, որի կողմից 2010 թ. տրվել են 2608 գյուղատնտեսական վարկեր՝ 1,779 միլիոն դրամ ընդհանուր գումարով:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի տնտեսական արդյունավետության բարձրացման գործում վճռական նշանակություն է ստանում ոռոգելի տարածքների ծավալների ավելացումը: Մարզի ոռոգելի շուրջ 36000 հեկտարից յուրաքանչյուր տարի ՋՕԸ-ների կողմից ոռոգվում է միայն 18000-19000 հեկտարը:

Մարզում 2008 թ. ապրիլից գործող ,,Ագրարային տեխնոլոգիաների գնահատման,, ծրագրի շրջանակներում ոչ ավանդական մշակաբույսերի արտադրության և վերամշակման նպատակներով իրականացվել է 5 ծրագիր՝ 2 739.5 հազար դրամ արժողությամբ: ,,Վորլդ Վիժն,, կազմակերպության Թալինի գրասենյակի տարածքային զարգացման ծրագրերում ընդգրկված է 26 համայնք: Արտենի համայնքում իրականացվում է ,,Արևային չորանոցի,, կառուցման ծրագիրը: Համայնքի համաֆինանսավորմամբ 2010 թ. ներ է դրվել 8.12 միլիոն դրամ գումար /համայնքի կողմից 2.78 միլիոն դրամ/: Նույն կազմակերպության կողմից Արտենի, Թալին, Ներքին Բազմաբերդ, Կաքավաձոր, Թաթուլ, Աշնակ, Դաշտադեմ համայնքների բնակիչներին հատկացվել է ԲՈՒՏ-8 տեսակի հնդկահավեր և կեր՝ 16.026 միլիոն դրամ ընդհանուր արժեքով:

Ընթացիկ տարում խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության պատճառով մարզի Կարբի, Օշական և Մաստարա համայնքներում անկել և անարյուն եղանակով ոչնչացվել է 387 գլուխ խոզ:

Անասնաբուժական աշխատանքները կատարվում են համայնքներում աշխատող 97 անասնաբուժների կողմից:

Մարզի Ռյա-Թազա, Ջամշլու, Աշտարակ կաթ, Ալագյազի պանրագործարան, Ապարանի պանրագործարան, Թալինի Բիո-կաթ, Արտենի և Արագած համայնքների

անհատ ֆերմերների և Մաստարայի Չեդո կազմակերպության կողմից ազգաբնակչությունից տարեկան մթերում են շուրջ 4600 տ. կաթ:

,,Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ-Հայաստան,, ՊՈԱԿ-ի ֆինանսավորմամբ 2010 թ. Մարզում իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

1. Սարալանջի պոմպակայանի նորոգում – 801,5 մլն դրամի,
2. Թալինի ջրանցքի նորոգում -50,0 մլն դրամ,
3. ,,Արզնի-Շամիրամ,, ջրանցքի նորոգում -1 716,0 մլն դրամ,
4. Դաշտադեմի պոմպակայանի նորոգում – 912,5 մլն դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ - 3480.0 մլն. դրամ:

Աշխատանքները կավարտվեն 2011 թ-ին:

2010թ. ՀՀ Արագածոտնի մարզի 13 համայնքներում նույն կազմակերպության կողմից իրականացվել են նաև 28.181 կմ, ոռոգման ներքին ցանցերի կառուցման և նորոգման աշխատանքներ՝ 614.827 միլիոն. դրամ արժողությամբ: Համայնքները կատարել են 92.224 միլիոն դրամի համաֆինանսավորում:

2010 թ. ջրօգտագործողներին մատակարարվել է 587.7 միլիոն դրամ ջուր, որի դիմաց գանձվել է 439.6 միլիոն դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Ջրօգտագործողների ընկերությունների 31.12. 2010 թ. դրությամբ ոռոգման ջրի գանձման ցուցանիշների վերաբերյալ

Հ/Հ	ՋՕԸ-ի անվանումը	Հասույթ /հազ.դրամ/	Գանձում /հազ.դրամ/	Տոկոս
1	Փարպի	86.061	61.945	72.0
2	Շամիրամ	125.884	90.1	71.6
3	Աշտարակ	107.16	89.0	83.1
4	Քասախ	73.2	62.0	84.7
5	Ամբերդ	8.14	7.5	92.1
6	Ապարան-Արագած	4.25	3.7	87.1
7	Թալին	183	125.3	68.5
	Ընդամենը	**587,695.0**	**439,545.0**	**74.8**

2009թ. համեմատությամբ գանձումները ավելացել են 5.9 %-ով:

Գանձումները արդյունք են նաև ՋՕԸ-երի ղեկավարների հետ մարզպետարանում անցկացվող պարբերական խորհրդակցությունների և տրված հանձնարարականների:

Մարզում կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների շուրջ 12.3 %-ը (70.2 հազար գլուխ տավար, որից 33.7 հազարը՝ կովեր), ոչխարների և այծերի՝ գրեթե 13.9%-ը (71.4 հազար գլուխ) և խոզերի՝ 8.5 %-ը (9.5 հազար գլուխ): 31.12.10 թ. դրությամբ մարզում աճել է միայն խոզերի գլխաքանակը:

ՀՀ Արագածոտնի մարզում օպերատիվ տվյալներով 2010 թ.ին արտադրվել է շուրջ 15.0 հազար տոննա միս, (2009 թ-ին՝ 14.0 հազար տոննա), 83.0 հազար տոննա կաթ, (2009 թ-ին՝ 80.5 հազար տոննա), 77.0 միլիոն հատ ձու (2009 թ-ին՝ 47.1 միլիոն հատ):

2010 թ. մարզում առկա 1267 տրակտորներից գարնան գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստ էին 961-ը, 179 հացահատիկահավաք կոմբայններից՝ 144-ը, 32

կերահավաք կոմբայններից՝ 27-ը: Գյուղատնտեսական առկա տեխնիկան հիմնականում մաշված է, հիմնախնդիր է նոր տեխնիկայով համալրումը և առկա հավաքակազմի արդիականացումը: 1997-2007թթ. ընթացքում արտերկրի դրամաշնորհների հաշվին մարզ է ներկրվել 7 կոմբայն և 77 տրակտոր:

1.7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Արագածոտնի մարզում գործում է կրթության ոլորտի 127 կազմակերպություն, այդ թվում՝ 122 հանրակրթական դպրոց, 2 հատուկ /դրանցից 1-ը՝ օժանդակ, 1-ը՝ արտակարգ ունակություններով օժտված երեխաների/ դպրոց, 2 արհեստագործական ուսումնարան, մարզային 1 և համայնքային ենթակայության 5 մարզադպրոց: Մարզում գործում է 3 ավագ դպրոց: 2010-2011 ուստարվա սկզբին աշակերտների թիվը կազմել է 18338 աշակերտ, կոմպլեկտավորվել է 1240 դասարան, որոնցից 118-ը առաջին դասարաններ են՝ 1714 աշակերտով: Կոմպլեկտավորված դասարաններից 110-ը երկկոմպլեկտ են, 12-ը՝ եռկոմպլեկտ:

Մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է 2733 մանկավարժ, որոնցից 2321-ն ունի բարձրագույն մասնագիտական կրթություն, 412-ը՝ բարձրագույն և միջին ոչ մասնագիտական կրթություն: 2010 թ-ին մարզի դպրոցներ է գործուղվել 20 ուսուցիչ: 2010 թվականին վերապատրաստվել է 1091 ուսուցիչ: Մարզի բոլոր առարկաների ուսուցիչները վերապատրաստվել են նախորդ տարիների ընթացքում:

2010 թ-ին ձեռք է բերվել 100 համակարգիչ: Ներկայումս համակարգչային դասարաններ ունի 80 դպրոց: Դպրոցներում կա 547 համակարգիչ, 70 դպրոցում գործում է ինտերնետային կապ: Շարժական ինտերնետային կայանը աշխատում է Երնջատափի և Ափնայի միջնակարգ դպրոցներում:

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլին 2010 թ. մասնակցել է 1875, մարզային փուլին՝ 431 աշակերտ: Նրանցից 51-ը մասնակցել է օլիմպիադայի հանրապետական փուլին: Տասներեք աշակերտ արժանացել է դիպլոմների և պարգևատրվել գովասանագրերով:

Բնական գազով լոկալ ջեռուցում է ստանում մարզի 21 դպրոց, 14 դպրոց ջեռուցվում է հեղուկ վառելիքով, 23 դպրոց՝ էլեկտրական սալիկներով, 68 դպրոց ջեռուցվում է վառարանների միջոցով: 2010 թ. հոկտեմբեր ամսին մարզի հանրակրթական դպրոցները ստացել են 118.840 լիտր հեղուկ վառելիք:

2009-2010 ուսումնական տարում մարզում գործել է համայնքային ենթակայության 29 մանկապարտեզ: 2010-2011 ուսումնական տարում դրնցից գործել է 26 –ը՝ 1740 երեխայով: Երեք մանկապարտեզներ նորոգվում են:

2010թ. մարզի 15 հանրակրթական դպրոցներում և 4 համայնքներում, որտեղ չկան մանկապարտեզների շենքեր բացվել են նախակրթարաններ, գործում է 23 խումբ՝ 455 աշակերտով: Մանկավարժների թիվը 31-ն է: Նրանք ունեն համապատասխան մանկավարժական կրթություն, մասնակցել են ,,Քայլ առ քայլ,, ծրագրի վերապատրաստման դասընթացներին:

,,Կրթության որակ և համապատասխանություն,, ծրագրի շրջանակներում վերապատ-րաստվել են մարզի բոլոր ուսուցիչները: Աշխատանքները կազմակերպվել են մարզի 4 դպրոց-կենտրոններում (Աշտարակի թիվ 5, Ապարանի թիվ 3, Թալինի թիվ 1 և Ծաղկահովիտի):

2010-2011 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցները ստացել են 39637 դասագիրք և ուսուցչի ձեռնարկ :

1.8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզի բուժական հաստատությունները ներկայացված են 22 ՓԲԸ-ով, որոնցից մարզային ենթակայությամբ գործում են 5-ը: 17-ը համայնքային ենթակայության են: ՀՀ Կառավարության 2006 թ. նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն (ՀՀ մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատող) որոշման կետերի համաձայն մարզում ստեղծվել են են 4 բժշկական կենտրոններ, 1 առողջության կենտրոն, 16 գյուղական առողջության առաջնային պահպանման կենտրոններ: Մարզի բուժհիմնարկներում աշխատում են 1089 բուժաշխատողներ, որից՝ 211 բժիշկ, 584 բուժքույր, 254 այլ աշխատողներ:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկների 2010թ, գլոբալ բյուջեն կազմում 1125.1 միլիոն դրամ: Այն 2009 թ. համեմատ աճել է 2.5% /2009թ.-ի գլոբալ բյուջեն կազմում է/ 1097,2 միլիոն դրամ/: 2010 թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ մարզի բուժհիմնարկների կատարո-ղականը կազմում է 1064,9 միլիոն դրամ, որից ամբուլատոր ծառայության կատարողականը՝ 699,5 միլիոն դրամ, հիվանդանոցային ծառայության կատարողականը՝ 365,4 միլիոն դրամ: գլոբալ բյուջեի և կատարողականի հաշվարկով ֆինանսավորումն իրականացվել է ամբողջությամբ:

Մարզպետարանի ենթակայության բժշկական կազմակերպություններում 2010թ.-ի ընթացքում վճարովի ծառայության մուտքերը կազմել են 69.4 միլիոն դրամ՝ նախորդ տարվա 58.4 միլիոն դրամի փոխարեն: 2009 թ. համեմատությամբ մուտքերն ավելացել են 11.4 միլիոն դրամով:

Հիվանդանոցային բուժօգնությունը մարզի տարածքում կատարվում է 4 բժշկական և 2 առողջության կենտրոններում: Ստացիոնար բուժօգնություն և սպասարկում ստացել են 4674 հիվանդներ, որոնցից 4143 ընդգրկվել են պետական պատվերի շրջանակում: Ծնունդների թիվը կազմում է 1261: Գրանցվել է շտապ օգնության 9780 կանչ:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկներից Երևանի և այլ մարզերի բուժհիմնարկներ 2009թ.-ին ուղեգրվել են 1813, իսկ 2010թ.-ին՝ մարզի 1725 բնակիչներ:

2010թ. ընթացքում մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների թիվը կազմել է 238104, որից 83743 –ը՝ 0-18 տարեկան երեխաներ: Տնային կանչերի թիվը կազմել է 16156, որից 0-18 տարեկաններինը՝ 10235: Մարզում գրանցվել է 1 տնային ծնունդ:

,,Առողջապահության կազմակերպիչների միավորում,, ՀԿ-ի կողմից մարզի պոլիկլինիկաներում կազմակերպվել է ,,Բաց դռների օր,, հանրապետության լավագույն մասնագետների մասնակցությամբ, որի ընթացքում բուժօգնություն է ստացել 345 մարդ:

2010 թ.դեկտեմբերի 20- դրությամբ մարզի առողջապահական հիմնարկների պարտքը կազմում է 29.6 միլիոն դրամ: Անցած 2 ամսում մարվել է շուրջ 18.0 միլիոն դրամի պարտք: Պետբյուջեի նկատմամբ և աշխատավարձի գծով պարտքեր չկան:

2010 թ.-ին ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկներում տարբեր ծրագրերով կատարվել են 1136.0 միլիոն դրամի ներդրումներ: 2009 թ. Համեմատ ներդրումները առողջապահության մեջ ավելացել են 38.8 միլիոն դրամով:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Արագածոտնի մարզում 2010 թ. առողջապահական համակարգում իրականացված ներդրումների վերաբերյալ

h.h.	Բուժհիմնարկը	Ներդրումներ - մլն. դրամ-			
		ԸՆԴԱ-ՄԵՆԸ	ԱԾԻԳ-ի միջոցներից	Սոց. Ներդրումների միջոցներից	Համայնքների միջոցներից
1	,,Սասունիկի ԲԱ,,	28.0	28.0		
2	,,Ուջանի ԲԱ,, ՓԲԸ	26.2	25.0		1.2
3	,,Քուչակի ԲԱ,, ՓԲԸ	50.8	50.8		
4	,,Արտենիի ԲԱ,, ՓԲԸ	108.0	51.0	49.0	8.0
5	,,Ուշիի ԱԱՊԿ,, ՓԲԸ	40.0	40.0		
6	Արտաշավանի ԲՄԿ	9.0	0.0		9.0
7	Ապարանի ԲԿ	874.0	874.0		
ԸՆԴԱՄԵՆԸ		**1136.0**	**1068.8**	**49.0**	**18.2**

1.9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում բնակվում է 22,025 կենսաթոշակառու, 231 զոհված ազատամարտիկների ընտանիք, 635 փախստական ընտանիք: 1988-1994 թթ. Ադրբեջանից բռնագաղթված և մարզում բնակություն հաստատած կարիքավոր փախստական ընտանիքների համար 2001-2007 թթ. ընթացքում միջազգային կազմակերպությունների կողմից կառուցվել են 152 քոթեջներ՝ 287 բնակարաններով և 2 բազմաբնակարան շենք՝ 40 բնակարաններով: 2010 թ. ավանդների փոխհատուցում է տրամադրվել մարզում բնակվող Հայրենական պատերազմի 126 վետերանների:

ՀՀ Արագածոտնի մարզում խոցելի խմբերի թվաքանակի վիճակագրական տվյալները 2010 թվականին ներկայացված են աղյուսակում.

1	Üå³ ëï³ éáõÁÝï³ ÝÇùÝ»ñ	ÁÝï³ ÝÇù	4841
2	Զբաղվածներ	Ù³ ñ¹	78180
3	Î »Ýë³ Ãáõß³ Ï³ éáõÝ»ñ	Ù³ ñ¹	22025
4	ö³ Ëëï³ Ï³ ÝÝ»ñ	ÁÝï³ ÝÇù	635
5	²é³ çÇÝÏ³ ñ·ÇÑ³ ßÙ³ Ý¹³ Ù	Ù³ ñ¹	402
6	º ñÏñáñ¹ Ï³ ñ·ÇÑ³ ßÙ³ Ý¹³ Ù	Ù³ ñ¹	3645
7	º ññáñ¹ Ï³ ñ·ÇÑ³ ßÙ³ Ý¹³ Ù	Ù³ ñ¹	2800
8	Ø³ ÝÏáõõÑ³ ßÙ³ Ý¹³ Ù»ñ»Ë³ Ý»ñ	Ù³ ñ¹	458
ÀÝ¹³ Ù»ÝÁÑ³ ßÙ³ Ý¹³ Ù		Ù³ ñ¹	7305
9	Ð³ ßÙ»Ý³ Ï³ Ýå³ï »ñ³ ½ÙÇ	Ù³ ñ¹	127
10	º ñÏÏáÕÙ³ ÝÇÍ ÝáÕ³ ½áõñÏ »ñ»Ë³ Ý»ñ ÙÇÝã 18 ï³ ñ»Ï³ Ý	Ù³ ñ¹	44
11	ØÇ³ ÏáÕÙ³ ÝÇÍ ÝáÕ³ ½áõñÏ »ñ»Ë³ Ý»ñ	Ù³ ñ¹	576

	¼áÑ³ Í³ ½ï³ Ù³ ñïÇÝ»ñ և զին ծառայողներ,որից	մարդ	231
12	Արցախյան պատ.զáÑ³ Í³ ½ï³ Ù³ ñïÇÝ»ñ	Ù³ ñ¹	156
13	Արցախյան պատ վÇÑ³ í áñ³ ½ï³ Ù³ ñïÇÝ»ñ	Ù³ ñ¹	196
	¶ñ³ Ýóí³ Í · áñÍ³ ¼áõÙï Ý»ñ	Ù³ ñ¹	1402

ՀՀ Արագածոտնի մարզում խոցելի խմբերի թվաքանակի վիճակագրական տվյալները 2009 թվականի և 2010 թվականի կտրվածքով ներկայացված են աղյուսակում՝

Բովանդակություն	Աշտարակ	Ապարան	Թալին	Արագած	Ընդամենը մարզում
ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /2009թ. /	**2384**	**618**	1385	**569**	**4956**
ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /2010թ. /	**2394**	**561**	**1346**	**540**	**4841**
երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացածների թիվը 2009թ.	**1077**	**373**	**525**	**249**	**2224**
երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացածների թիվը /2010թ./	**994**	**351**	**524**	**269**	**2138**
գրանցված գործազուրկների թիվը /2009թ. /	**912**	**183**	**142**	**129**	**1366**
գրանցված գործազուրկների թիվը /2010թ./	**1002**	**138**	**129**	**133**	**1402**

Մարզի երեխաների 11 տոկոսը գտնվում են կյանքի դժվարին իրավիճակում: Նրանցից 44-ը առանց ծնողական խնամքի մնացածներ են, 988-ը՝ միակողմանի ծնողազուրկ, 417-ը՝ հաշմանդամ, որից 138-ը՝ մտավոր խնդիրներով: ԱԾԽՄ երեխաներից 21-ը մեկ երեխա ունեցող ընտանիքներ են, 19-ը՝ 2 երեխա ունեցողներ: Նրանց կազմում մեկը այլազգի է՝ եզդի: Մարզի 9 համայնքներից 26 երեխա գտնվում է հանրապետության մանկատներում, որոնցից երկկողմանի ծնողազուրկ են 6-ը: Այս ժամանակամիջոցում գնահատվել են դժվարին իրավիճակում գտնվող 85 երեխաների սոցիալական կարիքները, որից 33 -ի համար մշակվեն են անհատական վերականգնողական ծրագրեր

Թալինում բացվել է ոստիկանությունում հաշվառված երեխաների համար վերականգնողական կենտրոն: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատած 2-ով նվազել է օրենքի հետ խնդիրներ ունեցող անչափահասների թիվը :

1.10. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում գործում ¿ 1 մարզային, 3 քաղաքային և 92 համայնքային ենթակայության գրադարան, 8 թանգարան, 8 երաժշտական, արվեստի և գեղարվեստի և 1 պարարվեստի դպրոց, 68 մշակույթի տáõÝ և 30 ակումբ:

Մարզում 2010 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է 3 մշակույթի օջախ, որի վրա ծախսվել է 104,980 միլիոն դրամ:

Հիմք ընդունելով ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի և ,,Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին,, ՀՀ օրենքի պահանջները, ֆիզիկական կուլտուրան և սպորտը մարզի տարածքում զարգացնելու և բնակչության շրջանում առողջ

ապրելակերպ ամրապնդելու նպատակով ընդունվել է մարզպետի 2010 թ. ապրիլի 26-ի թիվ 52-Ա որոշումը, կազմվել է միջոցառումների ծրագիր և ժամանակացույց:

Մարզի մշակութային և մարզական բնագավառներում առկա են մի շարք հիմնախնդիրներ՝ գրեթե բոլոր օբյեկտներն ունեն վերանորոգման, մեծ մասը նաև ջեռուցման կարիք, իսկ մարզական, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները՝ մարզական գույքի և երաժշտական գործիքների պակաս:

Մարզի 114 համայնքներում կան 1796 պատմամշակութային հուշարձաններ, որոնցից 1232-ը հանրապետական, և 564-ը՝ տեղական նշանակության են:

2010թ. ընթացքում մարզի համայնքներում կատարվել են պատմամշակութային հուշարձանների նկարահանման և հաշվառման աշխատանքներ, որոնք շարունակվելու են 2011 թվականին:

Ներկայում մարզի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից են նաև մարզի տարածքում գտնվող հուշարձանների ադեկվատ պահպանությունը: Այսպես, քարհանքերի շահագործման հետևանքով հաճախ տեղի են ունենում հարևանությամբ գտնվող հնագիտական հուշարձանները վնասելու դեպքեր: Հաճախ համայնքի ղեկավարների կողմից բավարար աշխատանքներ չեն տարվում հուշարձանների պահպանությանն ուղղված օրենքով սահմանված պարտականությունները կատարելու համար: Տեղի են ունենում հուշարձանների պահպանական գոտիների զավթումներ կամ ապօրինի սեփականացման դեպքեր: Այսպես, Իրինդ գյուղի 7-րդ դարի եկեղեցու վերականգնման աշխատանքներին, հուշարձանի պահպանման և օգտագործման համար մեծ խոչընդոտ է հանդիսանում դրան հարակից տան առկայությունը, կամ նմանատիպ օրինակ է ,,Դաշտադեմի ամրոց,, պատմամշակութային արգելոց-թանգարանի ստեղծմանը ներկայում խոչընդոտող ամրոցի տարածքում գտնվող 8 տներից դեռևս չիրացված երկու բնակելի տների առկայությունը:

Աշտարակ քաղաքի հուշարձանների պահպանման, օգտագործման և տուրիզմի զարգացման տեսակետից արդիական է քաղաքում ,,Աշտարակ,, պատմամշակութային արգելոցի ստեղծումը, որի նախագծի մշակման աշխատանքների համար կպահանջվի մոտ 9 մլն դր: Հուշարձանների պահպանման նպատակով պետական բյուջեից աստիճանաբար ավելի մեծ միջոցներ տրամադրելու պայմաններում, հանրապետության, ինչպես նաև մարզի բազմաթիվ ու մեծարժեք հուշարձանների վերականգնման խնդրի համալիր լուծման համար անհրաժեշտ է մարզում վերաստեղծել դեռևս 1989 թ. կազմավորված, սակայն հետագայում երկրի սոցիալ-տնտեսական դժվար վիճակի հետևանքով փակված ,,Քարագործ վարպետների պատրաստման,, ուսումնարանը:

Մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում 15 մասնագիտություններ գծով /որոնցից 7-ը ժող նվագարաններ/ սովորում է 664 աշակերտ, ուսուցիչների թիվը կազմում է 107, որոնցից 69 ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:

2010 թ. ընթացքում մարզում կազմակերպվել են մի շարք մարզական միջոցառումներ: Արագածոտնի մարզիկները մասնակցել են մարզում և հանրապետությունում կազմակերպված 40-ից ավելի մրցումների, այդ թվում՝ ՀՀ Նախագահի ,,Լավագույն մարզական ընտանիք,, մրցույթին, ԱԺ գավաթի խաղարկությանը, ,,Բանակ 17,, Երևան-Շուշի հանրապետական ռազմամարզական միջոցառման հանրապետական փուլին և այլ միջոցառումների: Անց են կացվել ներմարզային բազմաթիվ մրցումներ:

1.11. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Արագածոտնի մարզում օգտակար հանածոները ներկայացված են հիմնականում տուֆերով, անդեզիտաբազալտներով, պեռլիտային ավազներով և խարամներով, իսկ մետաղական հանածոները՝ ոսկի-բազմամետաղով (Թուխմանուկի ոսկու հանքավայրը): Արագածոտնի մարզի հանքավայրերը շահագործում են 93 կազմակերպություններ, որոնցից ներկայիս դրութամբ գործում է 50-ը: Լուծարված է 1-ը և չեղյալ է համարվել 1 ձեռնարկության հանքային իրավունքը: Գործող հանքարդյունաբերությանը զուգահեռ իրականացվում է նաև հանքային պաշարների հետազոտություն և գնահատում:

Մարզում բնապահպանական առումով լուրջ խնդիր է մնում թափոնների տարերայնորեն տեղադրման, անկանոն աղբահանության և աղբավայրերի ոչ կանոնակարգված ձևով օգտագործման խնդիրը: Մարզում կան պաշտոնական 4 աղբավայրեր, որոնք շահագործվում են Աշտարակ, Ապարան, Թալին քաղաքապետարանների և Ծաղկահովիտի գյուղապետարանի կողմից: Կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրը բացասական ազդեցություն է թողնում ինչպես բնակավայրերի էկոլոգիական վիճակի, այնպես էլ մարզի ռեկրեացիոն գրավչության վրա: Այն պահանջում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, աղբահանության աշխատանքների բարելավում: Միաժամանակ, անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը համայնքների տարածքների սանիտարական վիճակի նկատմամբ:

,,Հայանտառ,, ՊՈԱԿ ,,Արագածոտնի Անտառտնտեսություն,, մասնաճյուղի հաշվեկշռում առկա է 11110 հա հողատարածք, որից անտառածածկ է 5215 հա-ը: Մասնաճյուղը 2010 թ. կատարել է 25 հեկտարի տնկում, 70 խոր.մ. նոսրացում, 50 խոր.մ. սանիտարական հատում և 2 կմ. փշալարի անցկացում:

Մարզում աշխատանքներ են տարվում անտառտնտեսությունների կառավարման պլանների մշակման ուղղությամբ, որի համար կատարվում են համայնքների վարչական տարածքներում գտնվող անտառների գույքագրման, քարտեզագրման և սահմանների ճշտման աշխատանքներ: ՀՀ պետական բյուջեով մարզում համայնքների միջոցով ամեն տարի հիմնվել են 30-40 հա նոր անտառներ (մոտ 28 միլիոն դրամի շրջանակներում), ինչը չի կարող ապահովել անտառահատված տարածքների լիարժեք վերականգնումը:

Մարզում անտառային ռեսուրսների պահպանության հարցը փոխկապակցված է հողերի, կենսաբազմազանության, ինչպես նաև ջրային ռեսուրսների պահպանության հետ: Ապօրինի անտառհատումների հետևանքով ակտիվացել են հողերի էռոզիոն երևույթները և սողանքները: Բուսածածկի վերացումը նպաստել է մակերևութային հոսքի կարգավորման թուլացմանը, որի արդյունքում ավելացել են հեղեղների պատճառած վնասները, իսկ բնական աղբյուրների զգալի մասը սակավաջուր է դարձել: Հաշվի առնելով, որ մարզի 3 համայնքներում առկա են սողանքային գոտիներ, որոշակի աշխատանքներ են կատարվել

բնակավայրերի և ինժեներական ենթակառուցվածքների պահպանության համար: Սողանքների, սելավների և ջրհեղեղների հետևանքով հասցվող վնասի նվազեցման համար պետք է ուսումնասիրվեն առավել խոցելի տարածքները: Հաշվի առնելով, որ արտակարգ իրավիճակների և հողերի դեգրադացիայի կանխարգելման համար զգալի ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ վտանգավոր տարածքների կառուցապատման ինժեներապաշտպանական միջոցառումների կազմակերպման համար, պետք է մշակվի և իրագործվի մարզային և համայնքային իշխանությունների միջոցառումների համաձայնեցված պլան:

Մարզի ռեկրեացիոն գրավչությունը բարձրացնելու համար պետք է հաշվի առնել նաև, գյուղական բնակավայրերում ամբողջությամբ բացակայում է կոյուղու համակարգը, իսկ Աշտարակ, Ապարան, Թալին քաղաքների և Ծաղկահովիտի կոյուղու համակարգերը լուրջ հիմնական նորոգման և վերակառուցման կարիք ունեն: Քասախ գետի հարևանությամբ գտնվող բնակավայրերի կեղտաջրերն անարգել թափանցում են գետի ավազան:

Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում առկա խնդիրներն են՝

- ջրառի կետերում գլխամասային կառույցների մասնավորապես ջրաչափական կառույցների և սարքերի բացակայություն,
- ջրառի կետերում և ջրագծերում մեծ ծավալների ջրակորուստներ,
- կեղտաջրերի նախնական և կենսաբանական մաքրման կայանների բացակայություն՝ մասնավորապես Աշտարակ, Ապարան, Թալին քաղաներում և Ծաղկահովիտ, Օշական, Արտենի գյուղերում:

Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավազանների աղտոտվածության հիմնական աղբյուրը կենցաղային և գյուղատնտեսական գործունեության հետևանքով առաջացող կեղտաջրերն են, անհրաժեշտ է ուսումնասիրել գոյություն ունեցող կեղտաջրերի մաքրման ոչ ծախսատար տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները: Տուրիզմի զարգացմանը զուգընթաց պետք է ապահովել կեղտաջրերի մաքրման կենսաբանական ինքնավար համակարգերի կիրառումը և մարզի ու համայնքների զարգացման պլաններում այդ ենթակառուցվածքների վերականգնման համար համապատասխան միջոցներ:

2004-2008թթ. ,,Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում,, Ծրագրի Ջրհավաք ավազանների համայնքահեն կառավարման բաղադրիչի շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզի 114 համայնքներում իրականացվել են արոտների, խոտհարքների պարարտացում, բակլազգիների և ցորենի ցանք, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում, ջրարբիացման կետերի և դաշտամիջյան ճանապարհների կառուցում և այլն:. Մի շարք համայնքների արոտավայրերի համար մշակվել են կառավարման պլաններ: Անհրաժեշտ է ապահովել այդ աշխատանքների շարունակականությունը, քանի որ անասնապահության ծավալների աճի հետ մեկտեղ ճնշումն արոտավայրերի վրա կբարձրանա:

1.12. ԱՌԵՎՏՈՒՐ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Ներկայում Արագածոտնի մարզում գործում են 78 արտադրական ձեռնարկություններ: Դրանցից մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն ,,Աշտարակ կաթ,, , ,,Դայմոթեք,, ,,Թամարա Ֆրութ,, , ,,Իշխան,, , Օշականի ,,Խերես,, , ,,Արմենիա վայն,, ընկերությունները, հանքարդյունաբերական ձեռնարկությունները:

Մարզում մանրածախ առևտրի շրջանառությունը 2010 թ. կազմել է 8.0 միլիարդ դրամ, որն իրականացվել է 368 օբյեկտների կողմից: 2009 թ-ին մարզում գործել է 295 առևտրի օբյեկտ: Սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառությունը կազմել է 130.1 մլն. դրամ, գյուղարտադրանքի շուկաներինը՝ 141.6 մլն. դրամ, կրպակներինը՝ 354.5 մլն. դրամ և առևտրի այլ օբյեկտների շրջանառությունը՝ 4.2 միլիարդ դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ ապրանքաշրջանառությունն ավելացել է շուրջ 100.0 միլիոն դրամով:

Առևտրի օբյեկտներից 1-ը սպառողական ապրանքների և 3 –ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ են: Գործում են 110 խանութներ, 201 կրպակներ և 53 այլ օբյեկտներ: Մարզում սպառողական շուկան կայուն է և ապրանքաշրջանառության ծավալը 2010 թ. կազմել է մոտ 6.3 մլրդ դրամ:

2010 թ. տվյալներով գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է 48500 մարդ, արդյունաբերությունում՝ 2600 մարդ, իսկ ծառայություններում՝ 11900 մարդ:

Ծառայությունների ծավալը 2010 թ. կազմել է 6402.4 միլիոն դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ աճը կազմել է շուրջ 3000.0 միլիոն դրամ: Անհատական ծառայությունների ծավալը կազմել է 120.2 միլիոն դրամ:

ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմում է 67.0 հազար մարդ: Զբաղվածության կենտրոններում 2010 թ. հաշվառված աշխատանք փնտրողները կազմում են 2.5 հազ. մարդ, գործազուրկների թիվը կազմում է 1.4 հազ. մարդ:

Մարզի խոշոր և միջին արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում աշխատում է 14500 մարդ:

2. ՏԻՄ ԲՆԱԳԱՎԱՌ

2010 թ. մարզի համայնքներից ստացվել են ավագանու 1540 որոշումներ, որոնք ուսումնասիրվել են, ստուգվել է դրանց համապատասխանությունը ՀՀ օրենքներին և ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքին: Ավագանու որոշումներից 215-ը չեն համապատասխանել ՀՀ օրենքների պահանջներին և հետ են ուղարկվել համայնքներ՝ ճշտումներ կատարելու:

2010թ ընթացքում, Արագածոտնի մարզի համայնքներում վարչական վերահսկողություն իրականացնելու պլանի համաձայն, ուսումնասիրություններ են կատարվել մարզի 26 համայնքներում, կազմվել են համապատասխան ակտեր, որոնք ներկայացվել են մարզպետին և տարածքային կառավարման նախարարություն:

2010 թվականի ընթացքում Արագածոտնի մարզում հայտարարվել է համայնքնային ծառայության 81 թափուր պաշտոնների համար մրցույթներ: Կայացած միցույթների դիմել են 85 քաղաքացիներ, որոնցից 56 ճանաչվել են հաղթող և նշանակվել համայնքնային ծառայության պաշտոնում: /Տեղեկանքը կցվում է/:

2010թ ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում վերապատրաստում անցած և համապատասխան վկայական ստացած 142 համայնքային ծառայողներն անցել են ատեստավորում: 9 համայնքնային ծառայողներ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին և ազատվել են:

Տարվա ընթացքում կայացել է մարզխորհրդի 7 նիստ:

Մարզային զինկոմիսարիատի և մարզի համայնքի ղեկավարների հետ համատեղ անց է կացվել զորակոչային տարիքի պատանիների հաշվառումը, ինչպես նաև կազմակերպվել է գարանանային և աշնանային զորակոչը:

3. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ընդհանուր առմամբ, 2010 թ. մարզպետարանի կողմից տպագրության են պատրաստվել շուրջ 180 լուր, վերլուծական հոդվածներ, հարցազրույցներ: Դրանք տպագրվել են հանրապետական և մարզային զանգվածային լրատվամիջոցներում, տեղադրվել են մարզպետարանի ինտերնետային էջում: Համագործակցություն է եղել նաև հանրային հեռուստատեսության տարբեր ծրագրերի հետ:

Մարզային լրատվամիջոցների գործունեության մասին պարբերաբար տեղեկատվություն է հաղորդվել ՀՀ կառավարություն, մշակույթի նախարարության գրահրատարակչական գործի գործակալություն, Ազգային գրապալատ և Ազգային գրադարան: Լույս են տեսել հետեյալ թերթերը՝ ,,Կանթեղն Արագածի,,-9 համար, ,,Արագած աշխարհ,,-16 ,,Թալին աշխարհ,,-14 համար:

Պատրաստվել են պարտադիր հրապարակման ենթակա նյութեր, որոնք տեղադրված են մարզպետարանի տեղեկատվական տախտակում, ինչպես նաեւ ինտերներային կայքում:

Մարզի բոլոր համայնքներում կան տեղեկատվական ցուցատախտակներ, ուր հիմնականում համայնքապետարանի գործունեությանը վերաբերող հայտարարություններից բացի տեղադրվում են ավագանիների և համայնքապետի որոշումները:

2. ՄԱՐԶԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառներում առկա հիմնախնդիրներ.

1. Ինտենսիվ գյուղատնտեսական հողատեսքերը հակակարկտային կայանքներով պաշտպանելը.

2009թ. մարզի տարածքում տեղացած կարկտահարությունից 38 համայնքի գյուղացիական տնտեսությունների ցանքատարածություններին, բազմամյա տնկարկներին հասցվեց շուրջ 1.1 մլրդ. դրամի վնաս: Մարզում կարկտային ռիսկի նվազեցման նպատակով նախատեսված է տեղադրել 72 հակակարկտային կայանք, որից 2005-09թ. տեղադրվել է 15-ը /Կարբիում՝ 3, Օհանավանում՝ 3, Արտաշավանում՝ 1, Մաղմոսավանում՝ 1, Ագարակում՝ 2, Աղձքում՝ 1, Ոսկեհատում՝ 1, Փարպիում՝ 1, Ոսկեվազում՝ 1, Ղազարավանում՝ 1/:[1] Մինչև 2013 թ. մարզում տեղադրվելու են ևս 47 հակակարկտային կայաններ, որոնցից՝ 34-ը՝

[1] 2008-09թթ. <<Բարվա>> ՍՊԸ կողմից ք. Թալինում տեղադրվել է 2 հակակարկտային կայան:

գազագեներատորային և 13-ը՝ ռեագենտային: Այդ սարքավորումների տեղադրման համար կպահանջվի մոտ 400 միլիոն դրամ:

2. Ոռոգման արդյունավետության բարձրացումը.

Մարզում գործող 29 ջրամբարները սարքին են (բացի Ն. Սասնաշենի ջրամբարից), սակայն լուրջ նորոգման կարիք ունեն ոռոգման արտաքին ու ներքին ցանցերը: Անհրաժեշտ է՝ Վ. Սասնաշենում կառուցել 1.5 մլն խ.մ. կարողությամբ ջրամբար, որով կբարելավվի Վ. Սասնաշեն, Դավթաշեն և Ն. Սասնաշեն համայնքների ոռոգման խնդիրը: Աշխատանքների իրականացման համար ՀՀ Արագածոտնի մարզի 2011-2014 թթ զարգացման ծրագրով նախատեսված է շուրջ 1.6 մլրդ. դրամ գումար:

3. Մարզի վերամշակող արդյունաբերության զարգացումը.

Մարզի բոլոր տարածաշրջաններում անհրաժեշտ է ստեղծել կամ վերագործարկել կաթի և մսի մթերման, և վերամշակման կառույցներ, կազմակերպել պտղի, բանջարեղենի չորացման փոքր արտադրամասեր, բրդի ընդունման և լվացման կետեր: Մարզում ՓՄՁ–ների գործունեության ակտիվացումը կնպաստի համապատասխան ենթաճյուղերի վերականգնմանը: Անհրաժեշտ է նաև խաղողագործության և պտղաբուծության զարգացման հետ մեկտեղ պայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահպանության և իրացման համար: Այս առումով կարևորվում է մարզում սառնարանային նոր տնտեսությունների ստեղծման հիմնահարցը:

4.Մարզում թափոնների տարերայնորեն տեղադրման, անկանոն աղբահանության և աղբավայրերի ոչ կանոնակարգված ձևով օգտագործման խնդիրը.

Մարզում կան 4 աղբավայրեր, որոնք շահագործվում են Աշտարակ, Ապարան, Թալին քաղաքների և Ծաղկահովիտի գյուղապետարանի կողմից: Աղբահավաքման եղանակները և կիրառվող ենթակառուցվածքները թերի են, որի արդյունքում տեղի են ունենում աղբի մեծ կուտակումներ, աղբը հաճախ չի հեռացվում, առաջանում են սանիտարա-հիգիենիկ պայմանների խախտումներ: Կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման և աղբավայրերի կառավարման խնդրի լուծումը պահանջում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, աղբահանության աշխատանքների բարելավում, համայնքների տարածքների սանիտարական վիճակի նկատմամբ հսկողության ուժեղացում:

Քաղաքաշինության և բնակ-կոմունալ բնագավառներում առկա հիմնախնդիրներ.

1. Մարզի կրթական, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգում և շինարարություն.

Հիմնանորոգման կարիք ունեն 67 կրթական և 20 մշակութային օբյեկտներ: Մարզի 127 դպրոցներից միայն 73-ում են գործում լոկալ ջեռուցման համակարգեր: Աշխատանքների ամբողջական իրականացման համար 2011-2014 թթ. մարզի զարգացման ծրագրով նախատեսված է շուրջ 10.3 մլրդ դրամ:

2. Մարզում հաշվառված փախստական ընտանիքների բնակարանային խնդիրների լուծում. Մարզի բնակավայրերում 2010թ-ի նոյեմբերի 1-ի դրությամբ հաշվառված, 1988-

1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած 635 փախստական ընտանիքներ են բնակություն հաստատել:

2005-09թթ-ին պետական աջակցությամբ իրականացված փախստական ընտանիքների բնակապահովմանն ուղղված ծրագրերի շրջանակներում լուծվել է 192 փախստական ընտանիքների բնակարանային խնդիրները: Արդյունքում՝ ըստ ճշտված տվյալների ՀՀ կառավարության 20.05.2004 թ-ի N 747-Ն որոշմամբ հաստատված 1988-1992թթ-ին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովման առաջնահերթ ծրագրի դրույթների համաձայն, դեռևս լուծման կարիք ունի մարզի բնակավայրերի 197 փախստական ընտանիքների բնակարանային խնդիրը: Այդ խնդիրն առաջարկվում է լուծել անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով՝ շուկայից պատրաստի բնակելի տուն (բնակարան) ձեռք բերելու համար: Ըստ խոշորացված հաշվարկների՝ կպահանջվի 746.0 մլն. դրամ:

3. Մարզի բնակավայրերում 4-րդ աստիճանի վնասվածության 2 բազմաբնակարան շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծում. Ապարան քաղաքի Բաղրամյան 43 հասցեում գտնվող 32-բնակարանանոց և Նժդեհի 7 հասցեի 7-բնակարանանոց շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծում: Նշված 2 շենքերի 39 բնակիչների բնակարանային խնդիրները ժամանակին առաջարկվել է լուծել անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով՝ շուկայից պատրաստի բնակելի տուն (բնակարան) ձեռք բերելու համար: Ըստ խոշորացված հաշվարկների՝ կպահանջվեր 96 մլն. դրամ: Սակայն,ինչպես ցույց են տալիս շուկայի ուսումնասիրությունները, այդքան պատրաստի բնակելի տուն ձեռք բերել հնարավոր չէ: Անհրաժեշտ է քանդել այդ երկու շենքերը և դրանց փոխարեն կառուցել նոր շենք: Դրա համար կպահանջվի մոտ 350.0 միլիոն դրամ:

4. Մարզի գյուղական համայնքներում առկա երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, ՀՀ կառավարության 13.11.2008թ. N 1337 որոշման պահանջների համաձայն հաշվառված 112 ընտանիքների բնակարանային խնդրի լուծում. Նշված ընտանիքների բնակարանային խնդիրները առաջարկվում է լուծել անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով՝ շուկայից պատրաստի բնակելի տուն (բնակարան) ձեռք բերելու համար: Ըստ խոշորացված հաշվարկների՝ կպահանջվի 510 մլն. դրամ:

5. Գյուղական բժշկական ամբուլատորիաների հիմնանորոգման անհրաժեշտություն. Ներկայում մարզի 55 բուժ. հիմնարկներ հիմնանորոգման կարիք ունեն: 2011-14 թթ. մարզի զարգացման ծրագրով 35 բուժհիմնարկների հիմնանորոգման համար նախատեսված է 380 մլն դր:

6. Մարզում բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում. Ըստ փորձագիտական գնահատականների, մարզի 3 քաղաքներում առկա 77 բազմաբնակարան շենքերի տանիքները վերանորոգման կարիք ունեն, որի համար խոշորացված հաշվարկներով կպահանջվի 656 միլիոն. դրամ:

7. Մարզում բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ստեղծում**.** ՀՀ պետական ռեգիստրի տվյալներով 2009թ. հունիսի 1-ի դրությամբ մարզում գրանցված է 1

համատիրություն՝ Ապարան քաղաքում, որը կառավարում է 2 բազմաբնակարան շենքեր, 110 բնակարաններով: Մնացած բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման լիազորությունները իրականացնում են համայնքները: Խնդիր է բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգի կայացումը:

<u>Առողջապահության բնագավառում առկա խնդիրները.</u>

Անբավարար է մարզի առողջապահական հիմնարկների նյութատեխնիկական բազան՝ կարիք կա բուժական և ախտորոշիչ նորագույն սարքավորումների, կոշտ և փափուկ գույքի, շտապ օգնության մեքենաների: Համակարգի արդիականացման համար անհրաժեշտ նոր սարքավորումների ձեռքբերման և գործարկման համար կպահանջվի շուրջ 2.5 միլիարդ դրամ: